

Մահտեսի Մովսէս Աշղեանց  
 Պ. Կարապետ — Նիպեանց  
 Պ. Դաբբիէլ Թումանեանց  
 Պ. Յարութիւն — Ծատուրեանց  
 Պ. Աստուածատուր — Զաքարեանց  
 Պ. Հայրապետ — Մարտանեանց  
 Պ. Գէորգ — Տէր Յովհաննէսեանց  
 Պ. Գէորգ Կաճկաճեանց  
 Յովսէփ բէկ — Սէրգէյեանց  
 Պ. Յարութիւն — Ոսկերչեանց  
 Կարապետ բէկ — Զահվէրտեանց  
 Պ. Սմբատ — Սարգիս բէկեանց  
 Թաղէոս Զաքարեանց բժշկապետ  
 Նիկողայոս — Քարամեանց ուսուցչապետ:

Հ. Միքայէլ վարդապետ Զամչեան առեալ ի պատմութեանց զանազան պատմադրաց վասն Զիրուանայ եւ Զամախուոյ ըստ այսմ գրէ. (Հատ. Գ. յերես 529 եւ 530):

«Յամի Տեառն 1577, (ՌԻՁ) իսկ Սուլթան Մուրատ թագաւոր Օսմանցւոց լուր առեալ, թէ կայ սղմուկ մեծ յիշխանութեան Պարսից, ժողովեաց զօրք բազում ի ձեռս Ղարայ Մուստաֆայ զօրավարին՝ որ եւ Լալա փաշա կոչիւր, եւ առաքեաց յաշխարհն Արարատեան եւ յայլ սահմանս՝ յորս տիրէին Պարսիկք: Եկեալ զօրացն Օսմանցւոց ի Կարս քաղաք ամրացուցին զայն, եւ անտի դիմեալ ի վերայ Երեւանայ, առին զայն, նոյնպէս եւ զՆախ-ջուան եւ զԴաւրէթ, եւ գերեալ զվարժսն Հազար Հայ եւ Պարսիկ առաքեաց ի Յունաստան: Եւ ի միւսում ամի վերստին շարժեալ նոյն Լալա փաշա զօրավար գնաց ի Տիֆլիս եւ փախոյց զՍիմօն թագաւորն Վրաց, եւ անցեալ անտի էառ զԳանձակ, զՇիրուան յԱղուանս եւ զՇամախի, եւ տիրեաց մինչեւ ի Կարբանդ . . . Եւ եդ ի Շիրուան գունդ մի զօրաց ստուար, եւ զՕսման փաշա զօրագլուխ ի վերայ նոցա . . . Եւ Հասին նմա յօգնութիւն քառաւուն Հազար Թաթարք ի Արիմայ եւ Լալա փաշա հրաման ետ նոյն»: